ած են, որ չեն կարողանում պահպանել անբախտներին եղանակների խստութիւնից:

Իսկ այդ ժողովուրդը ծոյլ չէ. նա անդադար աշխատում է: Նա աշխատում է աւելի, քան թէ կը ներէր մարդի ուժը: Նրա կինը, նրա աղջիկը, նրա փոքրիկ երեխաներն անգամ գործակից են լինում գերդաստանի հօր աշխատութեանը: Դուք տեսել էք կանայք, որոնք հնձում են արտերը, եւ իրանց հունձը, իրանք շալակած, բերում են կալը ծեծելու համար: Դուք տեսել էք աղջիկներ, որոնք մեծ եռանդով մաքրում են մշակութեան ցանքերը աւելորդ խոտաբոյսերից: Դուք տեսել էք երեխաներ, որոնք արօրի լծերի վրայ նստած, քշում են եզները եւ օգնում են հօր գործին:

Այո՛, այդ ժողովուրդը ծոյլ չէ, նա աշխատում է, նա ամբողջ տարին հանգստութիւն չունի, բայց դարձեալ ապրում է աղքատութեան մէջ, դա՛ռն, ցաւալի աղքատութեան մէջ...

Ի՞նչ է պատճառը:

Հողը, որի վրայ նա ապրում է, թէեւ մի ժամանակ իր նախնիքներին էր պատկանում, բայց այժմ դարձել է օտար աղաների սեփականութիւնը: Նա մշակում է օտարի հողը: Իսկ աղայի պայմանները մշակի հետ այնքան ծանր են եւ անշահաւէտ, որ նրա երկրագործութեան բերքը եւ նրա վաստակը մեծ մասամբ վայելում է կալոածատէրը. մշակի համար մնում է այնքան, որով չէ կարողանում իւր կենսական ամենաանհրաժեշտ պիտոյքներին անգամ բաւականութիւն տալ:

Գիւղացու կեցութեան միւս պայմաններն եւս դրա նման են. Նրա խրճիթը դրւում է աղայի հողի վրայ, նրա համար յարկ է վճարում: Նրա անասուններն արածում են աղայի արօտներում, նրանց համար յարկ է վճարում: Ինքը գիւղացին, նրա ընտանիքը ապրում են աղայի հողի վրայ, այնտեղ ման են գալիս, նրա ջուրն են խմում, եւ իրանց գլուխներն պահպանելու համար հարկ են վճարում: Մի խօսքով, գիւղացին, բացի իր աշխատող ձեռքերից, ուրիշ ոչինչ չունի, նրան շրջապատող ամբողջ բնութիւնը պատկանում է աղային, եւ նրա մէջ գործելու համար նա պէտք է զոհէ իր աշխատութեան ամենամեծ մասը:

Ահա՛, այդ է պատճառը, սիրելի ընկերներ, որ մեր ժողովուրդը, հայրենի հողի վրայ սնունդ չգտնելով, գաղթում է, անդադար գաղթում է եւ օտար երկրներում բախտ է որոնում: Բայց դառնո՞ւմ են գաղթականները: – Ո՛չ: Դուք գիտէք, քանի՛ հազարաւոր ընտանիքներ մնացել են առանց տղամար-